մարդու իշխանությունը սրբազործող միակ պարագան սեփականատիրական իրավունքն էր, որը նույնպես վերապահված էր ոչ միայն նահապետին, այլ մասամբ նաև նրա տիկնոջը /տանտիրուհուն/՝ հատկապես տնային տնտեսության շրջանակներում:

ԷՍԹԵՐ ԽԵՄՉՅԱՆ
ԲԱՆԱՀՅՈՒՄԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԳՐԱՌՄԱՆ ՎԻՃԱԿՆ
ԻՋԵՎԱՆԻ ՇՐՋԱՆՈՒՄ

1. Ներկայիս Հայկական ՍՍՀ Իջևանի շրջանը XIX դ. վերջերին մտնում էր Ելիզավետպոլի նահանգի Ղազախի գավառի կազմի մեջ: Իջևանի շրջանի ազգաբնակչությունը ազգագրորեն միատարր չէ: Ըստ Մակար Բարխուդարյանի /Արցախ, 1895 թ./ Իջևանի շրջանի /նախկին Ղազախի գավառի/ բնակչությունն ունեցել է երեք շերտ. ա/տեղաբնիկներ, բ/Ղարաբաղի Խաչեն, Ջրաբերդ և Գյուլիստան մելիքություններից տեղափոխվածներ, գ/ Արարատյան դաշտից /Ղըրխ-Բուլաղ, Արզն ու Գամրեզ գյուղերից/ տեղափոխվածներ: XX դ. սկզբին /15-20-ական թթ./ մի շերտ ևս ավելացավ՝ գաղթականություն Արևմտյան Հայաստանից:

Ներկայումս շրջանի գյուղերի ազգաբնակչությունը ազգագրորեն միատարրվել է, սակայն բանահյուսական նյութերի դասակարգման տեսակետից պետք է տարբերակել երկու շերտ. ա/ արևելահայ, բ/ արևմտահայ:

2. Չնայած XIX դ. վերջին բանահավաքչական աշխատանքները լայն թափ ստացան, սակայն Ղազախի գավառում այդ աշխատանքներն աննշան չափով են տարվել: Ելնելով արխիվային ու տպագրված նյութերից, Իջևանի շրջանի բանահավաքչության պատմությունը կարելի է բաժանել երեք ժամանակահատվածի: Ա. XIX դ. վերջի բանահավաքներ /Քաջբերունի, Խաչատուր Շահնազարյան/, Բ. XX դ. 20-30-ական թթ. բանահավաքներ /Գեղամ Թարվերդյան, Նիկոլ Սարգսյան/, Գ. XX դ. 50-80-ական թթ. բանահավաքներ՝ ՀՍՍՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական գիտարշավ /Ա. Նազինյան, Վ. Ավագլյան, Ա. Կարապետյան/, Ա. Կարապետյան՝ 1957 թ. մինչև այժմ, Է. Խեմչյան՝ 1970-1976 թթ., Երևանի պետական համալսարանի ուսանողական բանահյուսական գիտարշավ, 70-ական թթ., Ն. Հակոբյանի ղեկավարությամբ:

3. Իջևանի շրջանի բանահյուսական երկացանկը պայմանավորված է ազգաբնակչության վերոհիշյալ շերտերի, որպես ազգագրական տարբեր շրջանների ավանդույթի կրողների, միջավայրում բանահյուսական նյու-

թի կենցաղավարման աստիճանով:

Բանահյուսական տարբեր ժանրերի գրառման ծակատագիրը տարբեր կերպ է դասավորվել: Նախորդ շրջանի բանահավաքների աշխատանքում զգալի է նախասիրության առկայությունը, այսպես՝ Քաջբերունին գրառել է մանկական երգեր, խաղեր, սկսվածքներ, սովորույթներ, Գեղամ Թարվերդյանը՝ նոր շրջանի երգեր, Ն. Սարգսյանը՝ առած-ասացվածքներ: Վերջին շրջանի բանահավաքները միտում են ունեցել գրառել առանց բացառության բանահյուսական բոլոր ժանրերը: Սա պայմանավորված է ավանդական ժանրերի կենցաղավարման տագնապալի նվազմամբ:

4. Մեր գրառած բազմաժանր բանահյուսական նյութերի քանակով ու կենցաղավարման աստիճանով կարելի է եզրակացնել, թե հատկապես որ ժանրերն են բավարարում ժամանակակից ունկնդրի պահանջները: 1930-ական թթ. ստեղծված երգերը դուրս են եկել կենցաղավարումից, մինչդեռ վաղ ավանդական բանահյուսության մի քանի տեսակներ չեն կորցնում իրենց կենսունակությունը /առած-ասացվածքները, գվարճախոսությունները, զրույցները և այլն/:

5. Բանահավաքչության արդի փուլում բանասացների քանակի նվազման և բանահյուսական երկացանկի ավանդույթի ինչ-որ չափով խզման պայմաններում մեր խնդիրն է հնարավորության սահմաններում գրառել և ապագա բանագետների քննությանը հանձնել դեռևս կենցաղավարող բանահյուսական նյութերը:

ԺԱՆՆԱ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՎՈՐ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿԵՆՑԱՂԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐՑԱԽՈՒՄ /ԸՍՏ ԼՂԻՄ-Ի ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆԻ ՆՅՈՒԹԵՐԻ/

1. Ժողովրդական բանավոր ստեղծագործությունը մեր օրերում, կապված կենսամակարդակի փոփոխման և հատկապես ինֆորմացիոն լայն հնարավորությունների հետ /մամուլ, ռադիո, հեռուստացույց և այլն/ ունի յուրօրինակ դրսևորումներ, որոնց պարզաբանումը բանագիտական առումով կարևոր պրոբլեմ է:

2. Նշված պրոբլեմի քննության համար ուշագրավ նյութ է տալիս ԼՂԻՄ-ի Մարտակերտի շրջանը: Այստեղ կան էթնիկ կազմը համեմատաբար անխառն պահած հնաբնակ հայկական գյուղեր և տարբեր պատմազգագրական շրջաններից /Պարսկահայքից, Գանձակից, Սյունիքից/ ներգաղթած հայաբնակ գյուղեր և այլազգիներով /աղրբեջանցիներ, ռուսներ, հույներ/ բնակեցված բնակավայրեր: Վերջին տասնամյակում